

# Նախազգուշական միջոցներ, որոնք պետք է ձեռնարկվեն հրդեհից հետո ձեր անշարժ գույքի վիճակը գնահատելիս

10 հունվարի 2025թ.

ENVIRONMENTAL HEALTH



Այն տարածքները, որոնք տուժել են անտառային հրդեհներից, աղտոտված են ծխով, մրով, մոխրով, քիմիական նյութերով, ջրով և կառուցվածքային վնասվածքներով: Նախքան անտառային հրդեհների հետևանքով խիստ վնասված կամ ավերված որևէ տարածք մուտք գործելը համոզվեք, որ տեղական հրշեջ ծառայությունը մաքրել է տարածքը և թույլատրել է մուտքը: Հենց որ կարողանաք մտնել այրված տարածք, խնդրում ենք համապատասխան նախազգուշական միջոցներ ձեռնարկել և գիտակցել ձեր առողջության և անվտանգության համար վտանգները: Հրդեհից հետո տուն վերադառնալու վերաբերյալ լրացուցիչ ցուցումներ կարող եք գտնել հետևյալ հղումով՝ <http://www.publichealth.lacounty.gov/eh/safety/returning-home-after-fire.htm>

## ԵՆԹԱԴՐԵՔ, ՈՐ ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԲՈՒՈՐ ԼԱՐԵՐԸ ԼԱՐՄԱՆ ՏԱԿ ԵՆ ԱՅՆՔԱՆ ԺԱՄԱՆԱԿ, ՄԻՆՉԵՎ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԸ ԴՐԱՆՔ ՉԱՆՁԱՏԻ

- Հեռու մնացեք Էլեկտրամատակարարման վնասված կամ ընկած լարերից և Էլեկտրական սյուներից:
- Հնարավոր է, որ ձեր կոմունալ ծառայությունների մատուցողները այս հրդեհի պատճառով անջատել են բնական գազի, Էլեկտրաէներգիայի և խմելու ջրի մատակարարումը:
- Ձեր շենքի և անվտանգության գործակալությունը կարող է ծանուցում տեղադրել ձեր վնասված շինության վրա՝ ձեր պաշտպանության վերաբերյալ ցուցումներով: Խնդրում ենք հետևել տեղադրված ծանուցմանը:

## ՆԱԽՔԱՆ ՏԱՐԱԾՔ ՄՏՆԵԼԸ ԱՆՁՆԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ԵՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԾՆՉԱՌԱԿԱՆ ՕՐԳԱՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

- Այրված տարածք մտնելիս շնչառական օրգանների պաշտպանության միջոցներ (N-95 կամ P-100 դիմակներ) կրեք՝ մոխրի ազդեցությունը նվազեցնելու: Մոխիրը պատկերացրեք որպես մանր, վտանգավոր փոշի, որը կարող է խորը ներշնչվել թոքերի մեջ և լուրջ խնդիրներ առաջացնել ամենուր, որտեղ այն նստի: Դա միայն կեղտ չէ:
- N-95 դիմակները պետք է պատշաճ կերպով տեղադրվեն դեմքին, առանց կողքերից բաց տեղերի: Դիմակը պետք է ծածկի և՛ քիթը, և՛ բերանը՝ թույլ չտալու փոշու և մոխրի ներշնչումը: Սխալ տեղադրված դիմակը նույնն է, ինչ դիմակ ընդհանրապես չկրելը:
  - **ԿԱՐԵՎՈՐ ՀԻՇԵՑՈՒՄՆԵՐ՝** պատշաճ օգտագործման համար հետևեք փաթեթավորման վրա առկա հրահանգներին: N-95 և P-100 դիմակները կարող են դժվարացնել շնչառությունը, հատկապես թոքերի կամ սրտի հիվանդություններով մարդկանց համար:

- Հրդեհից մնացած ծուխն ու մոխիրը կարող են վատթարացնել մարդու շնչառական կամ սրտի ինդիկները: Ծուխը կարող է գրգռել մաշկը, քիթը, կոկորդը, թոքերն ու աչքերը և հազ, խզզոցներ և դժվարացած շնչառությունն առաջացնել: Այս ախտանիշները կարող են նշանակալից լինել՝ կախված մրի/մոխրի տեսակից, ազդեցության քանակից և հիմնական շնչառական և սրտի հիվանդություններից: **Ուշադրություն դարձրեք ձեր ինքնազգացողությանը:**

**ՊԱՇՏՊԱՆԻՉ ՀԱԳՈՒՄՏԸ, ՁԵՌՆՈՑՆԵՐԸ ԵՎ ԿՈՇԻԿՆԵՐԸ**

- Առնվազն երկարաթև վերնաշապիկներ, երկար տաբատներ կամ կոմբինեզոններ, պարտեզի կամ կաշվե ձեռնոցներ կրեք:
- Պաշտպանիչ կոշիկներ կամ փակ հետևի մասով, բարձր ճիտքով ամուր կաշվե կոշիկներ կրեք, եթե այդ տարածքում այրված աղբ (օրինակ՝ կոտրված ապակի, մետաղ, փայտ և այլն) կա:

**ԱՉՔԵՐԻ, ԴԵՄՔԻ ԵՎ ԳԼԽԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

- Պաշտպանիչ ակնոցներ կամ փակ տիպի ակնոցներ կրեք:
- Խորհուրդ է տրվում պաշտպանիչ սաղավարտներ կամ շինսաղավարտներ կրել այն տարածքներում, որտեղ վերևից առարկաների անկման վտանգ կա:

**ԼՍՈՂՈՒԹՅԱՆ ՕՐԳԱՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

- Ականջի խցաններ կամ պաշտպանիչ ականջակալներ օգտագործեք, եթե ձեր մոտակայքում շինփրկարարական ծառայության ջոկատները ծանր տեխնիկա կամ էլեկտրական գործիքներ են օգտագործում:

**ՏԱՐԱԾՔ ՄՏՆԵԼԻՍ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԴԱՐՁՐԵՔ ԵՎ ԽՈՒՍԱՓԵՔ ՀԵՏԵՎՅԱԼ ՎՏԱՆԳՆԵՐԻՑ**

- Վնասված կամ ընկած էլեկտրալարերից;
- Մոխրից, մրից և աղտոտված աղբից;
- Անկայուն կառույցներից;
- Սուր առարկաներից, ինչպիսիք են մեխերը, մետաղը, բետոնը կամ փայտի կտորները;
- Սղալու, սայթաթելու և ընկնելու վտանգներից, ինչպիսիք են անկայուն կառույցները, բաց փոսերը կամ թաց և սղլիկ մակերեսները;
- Կենցաղային վտանգավոր նյութերից, ինչպիսիք են խոհանոցի և լոգարանի մաքրման միջոցները, ներկերը, ակալային մարտկոցները, լիթիումային մարտկոցները, թունաքիմիկատները, հերբիցիդները, պրոպան գազի բալոնները, վառելիքի տարաները, լիթիումային մարտկոցների պահեստավորման համակարգերը, և էլեկտրական մեքենաներից, որոնք մասամբ վնասվել կամ ոչնչացվել են;
- Փակ կամ վատ օդափոխվող տարածքներից, որտեղ պոմպերի, գեներատորների կամ բարձր ճնշման լվացման մեքենաների շահագործումից կարող է ածխածնի օքսիդ առկա լինել:

## **ՀՐԴԵՅԱՅԻՆ ՄՈՒՏԻՐԸ**

Անտառային հրդեհների հետևանքով առաջացած մոխիրը կարող է չափազանց վտանգավոր լինել առողջության համար:

- Անհանգստացնող մոխիրը կարող է գրգռել մաշկը, քիթը և կոկորդը, ինչպես նաև կարող է հազ և դժվարացած շնչառություն առաջացնել:
- Տերևների փչակներ կամ արդյունաբերական փոշեկուլներ մի օգտագործեք և խուսափեք ինտենսիվ ավելուց, ինչը կարող է մոխրի վտանգավոր ամպի գոյացման հանգեցնել:

## **ՏԱՐԱԾՔԸ ԼՔԵԼԻՍ ԱՐԵՔ ՀԵՏԵՎՅԱԼԸ**

- Մաշկից, մազերից, հագուստից և կոշիկներից հեռացրեք մոխիրն ու կեղտը՝ լաթի օգնությամբ նրբորեն հեռացնելով աղտոտիչները:

**Առողջության վրա անտառային հրդեհների ծխի ազդեցության մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք՝**

<https://www.cdc.gov/wildfires/risk-factors/>